# ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

## ՕՐԱԳԻՐ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ  ԶՄԻՒՌՆԻԱ  ՈՒՐԲԱԹ 20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1846  ԹԻՒ 268


## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կոստանդնուպոլիս, 17 սեպտեմբերի։

Օսմանեան տէրութեան գրեթէ ամէն կողմէն եկած լուրերը կըծանուցանեն, թէ այս ընդարձակ երկիրը հանդարտութեան և ըստ կարի բարեկարգութեան մէջ է. և երկբայութիւն չկայ թէ անցեալները Վանի, Հաքքեարիի և Խրդըստանի մէջ պատահած խռովութիւններն ալ քիչ ժամանակէն ետքը բոլորովին պիտի դադրին. քանզի կառավարութիւնը ամէն կերպ հարկաւոր միջոցները խոհեմ 'ի գործ դրաւ յիշեալ նահանգաց գլխաւոր խռովարարները ձեռք ձգելու համար։ Բնակչաց իշխանները այս կողմանց ըստ բաւականին անհոգ ըլլալով, նոր բարեկարգութիւններ հաստատելու կոչուածին միշտ հասարակաց բարեբաստութեանը և տէրութեան յառաջադիմութեանը համար։

Լսուեց թէ Անգղիոյ դեսպան վսեմափայլ միլորդ Կովլէյը, ընկերութեամբ քանի մը երևելի անձանց Պրուսայի շրջակաները պտըտելու գնաց անգղիական շոգենաւով մը։

Միլորդ Կովլէյը իր մեկնելէն առաջ Բարձրագոյն Դրան քանի մը գլխաւոր պաշտօնատարաց այցելութեան գնաց, և առաջին գործոց նախարար Ռէշիտ փաշային հետ երկար ժամանակ խորհուրդ ունեցաւ։

—Անգղիոյ երևելի վաճառական միլորդ Հանսօնին, որ Անգղիոյ դեսպանատան սեղանաւորն է Նիշան իֆթիխար տրուեցաւ Վեհափառ Արքային կողմանէ, Դարապուլուսի այէյին և քանի մը Անգղիացի վաճառականաց մէջ եղած վէճը բարեկամօրէն լմնցընելուն համար։

—Գաղղիոյ առաջնութեան ժողովոց ընդհանուր վերատեսուչ մոսիւ տը Սէկիւր Տիւբէյրօնը, և մոսիւ Տավիտ Կլավանին, որ Գաղղիոյ դեսպանատան սեղանաւորն է, մէյմէկ Նիշան իֆթիխար ընկալան Նորին Վեհափառութենէն։

—Նմանապէս հրամանագրաց (բասաբօրթ) գրատան առաջին պաշտօնատար Ահմէտ էֆէնտիին Նիշան իֆթիխար շնորհեցաւ։

—Կըհաստատեն թէ ծերունի յոյն քահանայ մը որ դեռ անցած տարի Այի Ստեֆանօ գիւղը շինուած նոր եկեղեցւոյն մէջ կըծառայէր, քրիստոնէական հաւատքը ուրանալով, մահմէտական կրօնքը ընդուներ է ինքնայօժար կամօք։

—Անցեալ 7ին կէս գիշերուան ժամանակ հրդեհ մը պատահելով Իւսկիւտար Սէլամսըզ ըսուած թաղը 10—12 տուն հրոյ ճարակ եղան։

—Նաւարանին մէջ երկու շոգեշարժ ֆրէկաթ կըշինուին, որոնք կըյուսացուի թէ քիչ ատենէն ետքը կըլմննան։ Այս շոգենաւերը 450 ձիու ուժ պիտի ունենան ամէն մէկը։

—Բարձրագոյն Դրան Թարգմանութեան գրատանը անդամ յարգամեծար Կաճիկեան Յակոբ աղան մօտ օրերս պիտի մեկնի ասկէց Փարիզ երթալու, ուրտեղ օսմանեան դեսպանատան առաջին Թարգմանի պաշտօնը պիտի վարէ, փոխանակ զմիւռնացի Շահնազարեան Աւետիք աղային, որ քանի մը ամիսէ 'ի վեր իր հրաժարական խնդիրը տուած է։

—Օսմանեան կառավարութեան սեղանաւոր մոսիւ ժաք Ալէօնը անցած ամսու 28ին պատիւ ունեցաւ օգոստափառ Կայսեր ներկայանալու որ մարդասիրական ոգւով ընդունելով զինքը, բարեհաճեցաւ ադամանդեայ պատուական տուփ մը շնորհելու անոր։ Կայսերական ունկնդրութենէն ետքը՝ ուրիշ երկու ադամանդեայ տուփեր ալ տրուեցաւ յիշեալ մոսիւ Ալէօնին, որպէսզի իր երկու եղբայրը Անդուան և ժան Ալէօնին աւանդէ Նորին Վեհափառութեան կողմանէ։

## ԵԳԻՊՏՈՍ

Աղեքսանդրիա, 3 սեպտեմբերի։

Նշանակութեան արժանի երևելի լուր մը չկայ ծանուցանելու։ Բոլոր Եգիպտոսի երկիրը անդորրութեան և բարեկարգութեան մէջ է Բարձրապատիւ փոխարքային իմաստուն և խոհեմ կառավարութեամբը, որ միշտ այս երկրին յառաջադիմութեանը և ծաղկելուն վրայ անխոնջ ջանիւ խնամք կըտանի։

Բարձրապատիւ Իպրահիմ փաշան Գահիրէէն մեկներ է Վերին Եգիպտոսը ճանապարհորդութիւն մը ընելու, ուսկից պիտի դառնայ ամսուս վերջին։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Առ պատուելի հասարակութիւն ազգիս (1)

Պատուելիք.

Մին ժամանակ էր, որ թէ Մադրաս և թէ տեղս մեր ազգային օրագրութիւնք էր հրատարակման, այլ աւաղ. որ փոխանակ օր աւուր ծաղկելոյ և ազգօգուտ պտուղք զարգարելոյ, ձիգ ժամանակ է որ միանգամայն խափանիլ է. մինչ և այլ քրիստոնէից մէջ հարիւր բազմաթիւ յաւելանալով գնաման է. Թողունք զԵւրոպ և Ամերիկա, և միայն աստ մեր քաղաքի մէջ մին վերահասութիւնք տանք, կըտեսնեմք որքան օրական, շաբաթական, և ամսական գրութիւնքն հրատարակման ինկինի մէջ. զորս եթէ ոք ցանկանայ կարդալ, ոչ միայն չի կարողանալ ամենայն հրատարակութիւնքն վերջ տալ։ Նոյն իսկ բանգալցիք և պարսիկք (մղուլանին), իւրաքանչիւր իւրեանց լեզուաւն տեսակ տեսակ օրագրեր ունեն. Քանզի յայտնի տեսանեմք որ օրագիրն պիտանի գործ է վասն ազգի. տեսակ տեսակ ուսումնական և բարոյական գիտութեամբք և առևտրական ծանօթութեամբք ընդլայնելով և ծաղկեցուցանելով. զուարճացուցանելով և կրթելով մարդոյս միտքն առ բարին։ Այսպիսի ազգօգուտ բարութեան Հնդստանայ կողմերէնքի մեր պատուելի ազգի կարօտութիւն լցուցանելոյ աղագաւ, ուրախ եմք ծանուցանել որ տեղւոյս մեր փոքրիկ հասարակութենումն ընկերութիւն հաստատեալ Արարատեան Ընկերութեան անուամբ, որոյ նպատակն է, այն գրասիրութիւնն որ մեր միջումն կայ, աւելի ևս արծարծել, քաջ գիտելով ըստ առածին որ. [illegible] երջանիկ։

Այս նպատակն յաջողեցուցանելոյ համար շատ հարկաւոր էր մին տպագրատուն, որ միջոցաւ կարողանին դիւրին եղանակաւ այս մեր ցանկութիւնն 'ի կատար հասուցանել. որ նոյնպէս ուրախ եմք ծանուցանել հաստատեալ է։ Այս տպարանումն կըհրատարակուի շաբաթական(1) օրագիր մի քառածալ, որ է մերս Ազգասէր, յորում բարոյական, բանասիրական և այլ պիտանի և ազգօգուտ գրութիւնք և թարգմանութիւնք կըտպուեն այնպիսի ոճիւ, որ դիւրահասկանալի լինի ամենեցուն որոյ գինն ըստ բաւականին երժանէ հաստատել որ ամենեքեան կարողանան առնուլ։ Այս տպարանի մասին Արարատեան Ընկերութեան յատկացեալ մի կանոնական գրել իւրեանց դաշնագրի միջումն, որ ամենայն տպագրելի բաներ առանց վերահասութեան և հրամանի անդամոց ընկերութեանն չտպուեն։ Այս կանոնն հանդերձ մին յատուկ կանոնաւ այս խորհրդեամբ գրուել որ ոչինչ տառանցին գրութիւնք այս տպարանի միջոցաւ դուս չգան որ անիրութիւն ծագեն մեր փոքրիկ հասարակութեան միջումն։ Քանզի, որպէս վերն ասացաք, նպատակն է միայն գրասիրութիւն արծարծել մերայնոց միջումն ուսումնական և զուարճալի գրութեամբք, յորդոր լինելով մերազգի ուսումնասէր պարոնայց՝ որ իւրեանց պարապ ժամանակն այնպիսի զուարճալի բաներով անցուցանել. կամ կարդալով այլոց գրածն. և կամ իւրեանք՝ իւրեանց կարողութեան համեմատ գրելով վասն այլոց կարդալոյ, 'ի քաջալերութիւն այսր՝ հաստատեալ

(1) Ընդհանուր սովորութիւն է կամ լաւ և է ասել օրէն է օրագիր հրատարակողաց, առաջին թուոյն մէջ յառաջաբանութեամբ մը ծանուցանել հասարակութեանը նոյն լրագրին ինչ դիտաւորութեամբ և ինչ կերպիւ հաստատուիլը, նմանապէս ինչ ընթացից հետևիլը։ Վասն որոյ Կալկաթայու Ազգասէր օրագրին վրայօք մանաւոր տեղեկութիւններ տալ ուզելով մեր ընթերցողը, արժան համարեցինք առաջնոյ թուոյս մէջ հրատարակել յիշեալ լրագրին յառաջաբան յայտարարութիւնք առանց փոխելու անոր աշխարհաբառ լեզուն։

